

Ը. ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԱՐՏԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆ

Թիֆլիսի Հայարտան երաժշտական միութիւնը կազմել է 1921 թ.ի Մարտի սկիզբներին: Այդ միութիւնն է, որ յետագայում վերանաւանեց «Հայարտան երաժշտական սկիւիա», որը հէնց սկզբից նպատակ է դրել տարածել հայ երաժշտութիւնը, դարձնել այդ աշխատատու հասարակութեանը մատչելի, աշխատանքի երգը մօտեցնել նրա հոգուն, ապրուշներին ու ժամանակին:

Կազմակերպութեան սկզբնական շրջանում գործի գլուխ էր անցել երաժշտագետ Ռոմանոս Մելիքեանը: Հայ երաժշտագէտները, որոնք մինչ այդ աշխատում էին անջատ կերպով և ոմանք էլ միանգամայն կտրւած էին հայ երաժշտական իրականութիւնից, շտապեցին մտնել միութեան շարքերը, առաջադրելով իրենց պատրաստակամութիւնը: Կարճ ժամանակամիջոցում երաժշտական միութիւնը կազմակերպւում է մի շարք վճակալ համերգներ թէ՛ Թիֆլիսում և թէ՛ հայաբնակ այլ քաղաքներում, իսկ յետագայում տալիս է նաև ինստրումէնտալ (գործիքաւոր) համերգներ:

1922 թ.ին սէկցիայի աշխատանքները կենտրոնանում են զլխաւորապէս հայ երաժշտագէտների ստեղծագործութիւնների քննադատութիւնների վրայ: Կազմակերպւում են մի շարք «Էրգի երեկոյներ»՝ ներկած հայ երաժշտութեանը:

1924 թ.ի ապրիլի վերջերին ընթիւնց նոր վարչութիւն բաղկացած հօթը հոգուց — Անուշաւան Տէր-Ղևոնդեան, Սարգիս Բարխուդարեան, Յովհաննէս Եղիազարեան, Կարօ Զաքարեան, Վարդգէս Տալեան, Արշալոյս Ալազեան և Վահան Ումը-Շատ:

Նորընտիր վարչութիւնը հէնց անդրանիկ ժողովում նպատակ դրեց երաժշտութիւնը մօտեցնել աշխատատու մասաներին, բաւարարելով նրա երաժշտական պահանջները, և որ զլխաւորն է՝ ամէն ջանք թափել մատչելի դարձնել նրան:

Ամենաառաջին հերթին կազմակերպեց նա քառամայն երգեցիկ խումբ, որի ղեկավարութիւնը յանձնեց Կարօ Զաքարեանին: Այնուհետև վարչութիւնն աչքի առաջ ունենալով, որ մեր աշխատատու հասարակութիւնը մեծ մասամբ զուրկ է եղել գործիքաւոր համերգներից, որոշեց կազմակերպել նաև սիմֆոնիկ նւագախումբ, որի ղեկավարութիւնը յանձնեց Յովհաննէս Լեղիազարեանին, որը կարճ ժամանակամիջոցում կազմեց 45 հոգուց բաղկացած նւագախումբ և կարողացաւ անցնել այն ծրագրերը, որ յանձնել էր նրան վարչութիւնը: Գործի զբաղման հետեանքները մասամբ էլ պէտք է վերագրել այն 'անգամանքին, որ նւագախումբը մեր սէկցիայի կեանքում նոր էր սկսում, և որ զլխաւորն է՝ մասնակցողները հոգեպէս մօտ էին գործին: Մի շարք փորձերից յետոյ 1924 թ. Մայիսի 23-ին նւագախումբը աւել իր անդրանիկ համերգը: Մրազրի մէջ էին Ան. Տէր-Ղևոնդեան, Ալ. Սպենդիարեան, Սար. Բարխուդարեան և մի քանի օտար երաժշտագէտներ, ինչպէս Սեն-Սանս, Մուստոգովի և ուրիշներ:

Այդ շրջանում երգեցիկ քառամայն խումբը ևս զուգընթաց կերպով տանում էր իր աշխատանքները, և նայն ամսին ասպարէզ եկաւ երկու անգամ Հայարտան թատրոնում Կ. Զաքարեանի ղեկավարութեամբ: Մրազրի մէջ էին Կոմիտաս, Սպ. Մելիքեան, Սիւնի (Գ. Միրզայեան) և Կարօ Զաքարեան: Այնուհետև վարչութիւնն ամառային շրջանի պատճառով ստիպւած եղաւ դադարեցնել իր աշխատանքները (որովհետև վարչութեան անգամների մեծամասնութիւնը բացակայում էր Թիֆլիսից):

Սեպտեմբերի վերջերին վարչութիւնը նորից է հաւաքում յետագայ աշխատանքների նախագիծը մշակելու նպատակով: Առաջին նիստին Կարօ Զաքարեանը տալիս է *информация* հայարտան կից երաժշտանոց (*studia*) բանալու մասին: Վարչութիւնն ընդունելով դա որպէս զլխաւոր պահանջ՝ տալիս է իր հաւանութիւնը և որոշում է նախագիծ կազմել ներկայացնելու համար Հայարտան խորհրդին: Մի որոշ ժամանակից յետոյ խորհուրդը տալիս է իր սկզբունքային համաձայնութիւնը, որից յետոյ սկսւում են *studia*-ի բացման նախապատրաստական աշխատանքները: Վարչութեան կողմից նշանակւում է որպէս վարիչ՝ Ան.



Թիֆլիսի հայարտամ երաժշտական Սեկցիամ

Տէր-Ղևոնդեանը, իսկ օգնական՝ Կարօ Զաքարեանը: Դրանից յետոյ Վահան Ումր-Շատի առաջարկութեամբ որոշւում է Հայարտան կից ունենալ նաև մանկական երգեցիկ եռաձայն խումբ: Այդ իդէան իրագործելու համար բանակցութիւններ են սկսւում վարչութեան և Լուսրամբի հրահանգչի միջև, որն ունենում է իր զրական հետեանքը: Կարճ ժամանակամիջոցում բոլոր հայկական դպրոցներից ընտրւում է 200 հոգուց բաղկացած եռաձայն խումբ:

Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, 1924-25 թւի աշնանը վարչութեան առջև բացւում է գործունէութեան լայն ասպարէզ:

Որպէս զի հնարաւոր լինէր այդ գործերը կատարել, վարչութիւնը բաժանեց վերոյիշեալ աշխատանքները հետեւեալ կերպով. *СТУДИЯ*-ի գործերը յանձնեց Ան. Տէր-Ղևոնդեանին, Սար. Բարխուդարեանին և Կարօ Զաքարեանին. երգեցիկ եռաձայն խումբը՝ Կարօ Զաքարեանին և Վ. Տալիանին. մանկական խումբը՝ Ա. Այվազեանին և Վահ. Ումր-Շատին, իսկ սիմֆոնիկ նւագախումբը՝ Յովհան. Ե.

ղիազարեանին: Այսպիսի ճիւղաւորումը, անկասկած, օգտակար դեր խաղաց վարչութեան գործունէութեան մէջ: Եւ ահա միմեանց ետեւից տեղի ունեցան մի շարք վճակ համերգներ թէ՛ մեծերի և թէ՛ փոքրերի համար: Մեծերի համար քառասուն խումբն ունեցաւ թուով ութը համերգ, որոնցից ամենաուշագրաւն է Մարտի 7-ի համերգը, որ տեղի ունեցաւ Թ. Կ. Գ. Կ. երբորդ նստաշրջանի առթիւ, Թիֆլիսի Պետական օպերային թատրոնում: Վերոյիշեալ խմբի ծրագրի մէջ են զբեթէ մեր բոլոր երաժշտագէտները, ինչպէս օրինակ Կոմիտաս, Ան. Տէր-Ղևոնդեան, Սար. Բաբխուղարեան, Ռոմ. Մելիքեան, Սպ. Մելիքեան, Գր. Միրզայեան (Սիւնի), Միք. Միրզոյեան, Ալատ Մանուկեան, Գուր. Միրզոյեան, Տալեան և Ումար-Շատ:

Մանուկների համար երգ-եռաձայն խումբն ունեցաւ հինգ համերգ. ծրագրում տեղ են զբաւել Ալ. Մանուկեան, Ա. Տէր-Ղևոնդեան, Ս. Մուրադեան, Ռոմ. Մելիքեան, Գեղարիկ, Ումար-Շատ և Մ Միրզոյեան: Այդ ժամանակաշրջանում ասպարէզ եկաւ նաեւ սիմֆոնիկ նագախումբը, բայց դժբախտաբար միայն մի անգամ: Երազրի մէջ էին Մուստոֆովի, Ջալովովի, Սեն-Սանս և Սկերբին: Իրկորդ մասը ներկած էր երիտասարդ երաժիշտների Յովհ. Եղիազարեանի և Կ. Ջաքարեանի առաջին գործիքաւոր աշխատութիւններին (սիմֆոնիա Եղիազարեանի Ռապսոդիա արեւելեան ոճով, Կ. Ջաքարեանի):

Զբաւականանալով այդ ծրագրով՝ վարչութիւնը կազմակերպեց նաեւ մի շարք գործիքաւոր համերգներ, որոնց տրեց սիստէմատիկ բնոյթ Հայարտան զահլիճում (զաշնաուոր, ջութակ, և թաւ ջութակ). ունեցաւ նաեւ խառը համերգներ, վճակ և գործիքաւոր:

Վարչութեան աչքից չվրիպեց նաեւ սէկցիայի բարոյականը: Նա աշխատեց ընդարձակելով նրա գործունէութիւնը, կապ հաստատել կենդոնների հետ, Մօսկւայի հայկական սիկտորի և Երեանի Կօնսէլվատօրիայի միջև: Վարչութիւնը դիմեց նաեւ Հայաստանի ներկայացուցիչ՝ ընկ. Սուրիաթեանին հայ երաժիշտների անտիպ աշխատութիւնները տպագրելու համար: Այդ առիթով կոչ արեց երաժիշտների անտիպ աշխատութիւնները կենդոնացնել սէկցիայի մօտ ցուցադրելու նպատակով: Փորձեց նաեւ կազմել հայ երաժիշտների բարեկամների ընկերութիւն և այլն:

Վարչութիւնն ունեցաւ նաեւ մի դասախօսութիւն ներկած երաժշտութեանը: Բացի այդ՝ կազմակերպեց պատույ երեկոյ ներկած մեր ականաւոր երաժշտագէտ Ալ. Սպենդիարեանին: Ի միջի այլոց Հայարտան զահլիճում կազմակերպեց վեց գործիքաւոր և չորս խառը համերգ:

Սէկցիայի վերոյիշեալ աշխատանքները, որ տարւել և տարւում են այժմ, պահանջում են մեծ էնէրգիա, որը պիտի բղիթի զեկավարների և դասատուների պատրաստակամութիւնից:

Յանկալի է, որ այդ գործի մէջ կարմիր թելով անցնի հայ երաժշտութեան ոգին, որ իր հարազատութեամբ հետաքրքրի հասարակութեանը՝ և վերջինիս մօտեցնելով գործին՝ առաջ նրան դէպի զեղարեւոտը:

3/VII. 1925 թ.

Թիֆլիս

(Շարունակելի)

ՎԱՀԱՆ, ՌԻՄՐ-ՇԱՏ

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ